ընթերցմունս տառ և բառբառս Հայոց, զի ամենեքեան կարող լինիցին արհեստին ընթեռնուլ սմայ և այլ ամենայն արժանաւոր գրեանց, և ընթեռնուլով մտցէ խորհուրդ իմ 'ի սիրտ նոցայ և հնարն իմ 'ի միտս, և յոյս նոցայ տայ տեղի յետեվլ զերծանելոյ 'ի դժնդակ ծառայութենէ, որ գարշ և աղտեղի է քան զամենայն գարշատեսութիւնք, և անմխիթար տոժ 'ի վերայ ընութեան մարդոյ 'ի յերեսս երկրի, թէպէտ տխուր է յիս, զի զամենայն զոր ինչ 'ի վերայ այս մտածութեան որ 'ի միտս իմ ես ունիմ ժամանակն իմ ոչ խոստանայ զի ձգաբանութեամբ մանրամասնաբար պատճառաւ այժմոյս 'ի յայսմ բացատրեցից 'ի միտս յազգին իմոյ, այլ ըստ համեմատութեան աշխարհօրէն առակաց լաւ է մի քանթէ ոչինչ, նմանս յոյս իմ մեծ է, զի Տէր արժանի զիս արասցէ և տացէ ժամանակ կենաց իմոց, զի գրեցից բացատրութիւն ամենայն 'ի սմայ գրեցելոյս 'ի երկրորդ հատոր գրքուկն և մանրամասնաբար ճառիւք գրել, պատճառն ամենայն հատոր գրեցելոյ իմոյ 'ի յայսմ Օրինաց և բացատրել և այլ զամենայն զոր ինչ որ հարկաւոր վասն բարութեանց հասարակաց, նմանս պատճառն իմոյ յատուկ պակասութեանց կարճառօտ գրեցելոյ, վասն զի կացութիւնն իմ ոչ խոստանայր կալով և մնալով երկայն ժամանակաւ և ծախել ժամանակս իմ 'ի վերայ միայնակ